

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար**

**1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-10)**

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ներքին աուդիտի իրականացման տարեկան ծրագրի կազմման աշխատանքներին, մասնակցում է ներքին աուդիտի անցկացման աշխատանքներին, աուդիտի ավարտից հետո կազմում է հաշվետվություն, նախապես այն քննարկելով աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ, իրականացնում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Գնահատում է Մարզպետարանի և համակարգի հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությամբ հաստատված ակտերի պահանջների անհամապատասխանությունը:

Մրցույթը կկայանա 26.10.2012 թվականին ժամը 11.00-ին, ք. Եղեգնաձոր

**2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-11)**

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ներքին աուդիտի իրականացման տարեկան ծրագրի կազմման աշխատանքներին, մասնակցում է ներքին աուդիտի անցկացման աշխատանքներին, աուդիտի ավարտից հետո կազմում է հաշվետվություն, նախապես այն քննարկելով աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ, իրականացնում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Գնահատում է Մարզպետարանի և համակարգի հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությամբ հաստատված ակտերի պահանջների անհամապատասխանությունը:

Մրցույթը կկայանա 26.10.2012 թվականին ժամը 14.00-ին, ք. Եղեգնաձոր

**3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-12)**

Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ներքին աուդիտի իրականացման տարեկան ծրագրի կազմման աշխատանքներին, մասնակցում է ներքին աուդիտի անցկացման աշխատանքներին, աուդիտի ավարտից հետո կազմում է հաշվետվություն, նախապես այն քննարկելով աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ, իրականացնում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Գնահատում է Մարզպետարանի և համակարգի հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությամբ հաստատված ակտերի պահանջների անհամապատասխանությունը:

Մրցույթը կկայանա 02.11.2012 թվականին ժամը 11.00-ին, ք. Եղեգնաձոր

**4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-7)**

Իրականացնում է Օրենսդրական դաշտի ապահովման նպատակով մարզի համայնքների ավագանու որոշումների, մարզային ենթակայության հիմնարկների և ընկերությունների ղեկավարների կողմից տրված հրամանների ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ անհրաժեշտ խորհրատվություն տրամադրելու աշխատանքները: Օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով համայնքների ղեկավարների աշխատակազմերին տրամադրում է մեթոդական և գործնական օգնություն .

Իրականացնում է Մարզպետի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի ղեկավարի հրամանների նախագծերի նախապատրաստումը, Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապատրաստված նախագծերի իրավական ակտերի համապատասխանության աշխատանքները.

Մրցույթը կկայանա 02.11.2012 թվականին ժամը 14.00-ին, ք. Եղեգնաձոր

1-3 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝ տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն:

4-րդ կետում նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է  Իրավագիտություն  մասնագիտությամբ բարձրագույն կրթություն:

1-4 կետերում նշված թափուր պաշտոններն զբաղեցնելու համար \* Սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

\*անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

\* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

\*-տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2):

\*\*\*

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

\*դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

\*տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետկամ տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

\*արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.

\*մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

\*անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր

ՀՀ քաղաքացիները մրցութին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2012թ հոկտեմբերի 9-ը:

Մրցութին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան

/ հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5, հեռ 2-22-52, 2-55-95/: